| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Չափաբաժինների համարները /Չհիմնավորված ցածր գնային առաջարկներ/ |
|---|---|---|
| 1 | Արվատեկ ՍՊԸ | 2 |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին.**

---

**(Մ. Ղարաջյան)**

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել NN 3, 5, 6 և 7 չափաբաժինների մասերով գնային առաջարկներ ներկայացրած Կոնսէլ ՍՊԸ-ի և Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու նպատակով՝ ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեով 2016 թվականի մարտի 14-ին ժամը 11:30-ին:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**Հանձնաժողովի նախագահ՝** ____________ **Մ. Ղարաջյան**

**Անդամներ՝** ____________ **Ռ. Չերքեզյան**

____________ **Ա. Սահակյան**

____________ **Հ.Ավետիսյան**

____________ **Գ. Ղազարյան**

**Քարտուղար՝** ____________ **Լ Բաբայան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային ընթացակարգի գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի

**ք.Երևան, Նալբանդյան 104**

**03-ը մարտի 2016թ.**
**ժամը 11⁰⁰**

Մասնակցում էին՝
նախագահ /գնահատող հանձնաժողովի ղեկավար /ԳՊ/ԳԱՂ/՝
- ՀՀ ԱԱԾ ՏՆՏՎ պետ, Մ. Ղարաջյանը,

անդամներ.
ա/ գնահատող անձնակազմ /ԳՊ/ԳԱ/.
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 4-րդ բաժնի, 2-րդ բաժանմունքի պետ, Ռ. Չերքեզյանը,
- ՀՀ ԱԱԾ ՏՆՏՎ 2-րդ բաժնի 2-րդ բաժանմունքի պետ, Ա. Սահակյանը,

բ/ բացող անձնակազմ /ԳՊ/ԲԱ/՝
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի ավագ իրավախորհրդատու, Հ. Ավետիսյանը,
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի ինժեներ-տնտեսագետ, Գ. Ղազարյանը,

Հանձնաժողովի քարտուղար /ՄՀ/՝
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի պետ, Լ. Բաբայանը

**1. Էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Մ. Ղարաջյան)

Ընդունել ի գիտություն, որ

ա/ 03.03.2016թ-ին էլեկտրոնային ձևով գնումներ կատարելու նպատակով «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով հայտարարված շրջանակային ընթացակարգին էլեկտրոնային հայտեր են ներկայացրել թվով 6 Մասնակից.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ |
|---|---|
| 1 | Կոնսէլ ՍՊԸ |
| 2 | Արվատեկ ՍՊԸ |
| 3 | ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ |
| 4 | Շուշան Տեխնիկս ՍՊԸ |
| 5 | Ֆոտոն ՍՊԸ |
| 6 | Տեխնո-Ար ՍՊԸ |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**2. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.**

---

(Մ. Ղարաջյան)

Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան էլեկտրոնային հայտեր՝ փաստաթղթեր, կազմել և ներկայացրել են ներքոհիշյալ Մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ |
|---|---|
| 1 | Կոնսէլ ՍՊԸ |
| 2 | Տեխնո-Ար ՍՊԸ |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**2.3.** Հաշվի առնելով, որ մասնակիցների՝ **Արվատեկ ՍՊԸ**-ի կողմից հավելված 4.2.-ը, **ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ**-ի կողմից հավելված 3.4.-ը և հավելված 4.2.-ը, **Շուշան Տեխնիկս ՍՊԸ**-ի կողմից հավելված 4.2.-ը և **Ֆոտոն ՍՊԸ**-ի կողմից հավելված 4.2.-ը ներկայացվել են ոչ պատշաճ կերպով, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և հրավերով սահմանված կարգով առաջարկել մասնակիցներին ներկայացնել /շտկել/ տեղ գտած անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին.**

---

(Մ. Ղարաջյան)

3.1. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 2.3. կետում նշված փաստաթղթերը ներկայացնելու հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ը՝ ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | ____________ | **Մ. Ղարաջյան** |
| **Անդամներ՝** | ____________ | **Ռ. Չերքեզյան** |
| | ____________ | **Ա. Սահակյան** |
| | ____________ | **Հ.Ավետիսյան** |
| | ____________ | **Գ. Ղազարյան** |
| **Քարտուղար՝** | ____________ | **Լ. Բաբայան** |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

**«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-1[illegible]/12» ծածկագրով շրջանակային ընթացակարգի գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի**

**ք.Երևան, Նալբանդյան 104**

**10-ը մարտի 2016թ.**
**ժամը $11^{30}$**

Մասնակցում էին՝
նախագահ /գնահատող հանձնաժողովի ղեկավար /ԳՊ/ԳՂՊ/՝
- ՀՀ ԱԱԾ ՏՆՏՎ պետ, Մ. Ղարաջյանը,

անդամներ.
ա/ գնահատող անձնակազմ /ԳՊ/ԳԱ/.
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 4-րդ բաժնի, 2-րդ բաժանմունքի պետ, Ռ. Չերքեզյանը,
- ՀՀ ԱԱԾ ՏՆՏՎ 2-րդ բաժնի 2-րդ բաժանմունքի պետ, Ա. Սահակյանը,

բ/ բացող անձնակազմ /ԳՊ/ԲԱ/՝
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի ավագ իրավախորհրդատու, Հ. Ավետիսյանը,
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի ինժեներ-տնտեսագետ, Գ. Ղազարյանը,

Հանձնաժողովի քարտուղար /Մհմ/՝
- ՀՀ ԱԱԾ տնտեսական վարչության 6-րդ բաժանմունքի պետ, Լ. Բաբայանը

**1. Էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Մ. Ղարաջյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1. 03.03.2016թ-ի արձանագրության 2.3. կետով նիստը կասեցվել էր Մասնակիցների **Արվատեկ ՍՊԸ**-ի կողմից հավելված 4.2.-ը, **ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ**-ի կողմից հավելված 3.4.-ը և հավելված 4.2.-ը, **Շուշան Տեխնիկս ՍՊԸ**-ի կողմից հավելված 4.2.-ը և **Ֆոտոն ՍՊԸ**-ի կողմից հավելված 4.2.-ը հավելվածները ոչ պատշաճ ձևով ներկայացնելու պատճառով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

1.2. **Արվատեկ ՍՊԸ**-ի, **Շուշան Տեխնիկս ՍՊԸ**-ի և **Ֆոտոն ՍՊԸ**-ի կողմից հրավերով սահմանված պայմաններին համապատասխան շտկվել են ոչ պատշաճ ձևով ներկայացրած փաստաթղթերը: Հանձնաժողովը որոշեց վերոհիշյալ կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերը գնահատել բավարար:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

1.3. **ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ**-ը հրավերով սահմանված պայմաններին համապատասխան չի շտկել են ոչ պատշաճ ձևով ներկայացրած փաստաթղթերը: Հանձնաժողովը որոշեց մերժել **ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ**-ի կողմից ներկայացրած հայտը:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**2. Յուրաքանչյուր Մասնակցի գնային առաջարկը.**

---

**(Մ. Ղարաջյան)**

2.1. Յուրաքանչյուր Մասնակցի կողմից առաջարկված միավորի գները ներկայացված են սույն արձանագրության **N 1 Հավելվածում (կցվում է)**:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

2.2 Ներքոհիշյալ Մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալները, ինչպես նաև դրանց թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են).

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ |
|---|---|
| 1 | Կոնսէլ ՍՊԸ |
| 2 | Արվատեկ ՍՊԸ |
| 3 | Շուշան Տեխնիկս ՍՊԸ |
| 4 | Ֆոտոն ՍՊԸ |
| 5 | Տեխնո-Ար ՍՊԸ |

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

**3. Շրջանակային ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելու և հայտարարելու մասին.**

---

**(Մ. Ղարաջյան)**

Հիմք ընդունելով Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը.

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5, դեմ՝ 0**

3.1. Հանձնաժողովը շրջանակային ընթացակարգի առաջին, երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած որոշեց և հայտարարեց ըստ չափաբաժինների համաձայն սույն արձանագրության **Հավելված N 2-ի**:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5, դեմ՝ 0**

3.2. Ներքոհիշյալ Մասնակիցների կողմից հայտով ներկայացվել են հայտարարություններ այն մասին, որ իրենց կողմից ներկայացված համապատասխան չափաբաժիններում նշված ապրանքները հանդիսանում են **ԵՏՄ անդամ երկրների** արտադրության ապրանքներ.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | **Չափաբաժինների համարները** /ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքների/ |
|---|---|---|
| 1 | Տեխնո-Ար ՍՊԸ | 9 |

Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի <բ> պարբերությունը՝ նշված ընկերությունները համապատասխան չափաբաժինների մասերով ունեն մինչև 15% գնային առավելություն:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

3.3. Հաշվի առնելով, որ NN 3, 5, 6 և 7 չափաբաժինների մասերով բավարար գնահատված բոլոր Մասնակիցների գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար պլանավորված ֆինանսական միջոցները, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը հայտերի բացման նիստը կասեցվել է NN 3, 5, 6 և 7 չափաբաժինների մասերով գնային առաջարկներ ներկայացրած Կոնսէլ ՍՊԸ-ի և Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի հետ համապատասխան չափաբաժինների մասերով առաջարկված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով:

**Ընդունվել է որոշում. Կողմ՝ 5 , դեմ՝ 0**

3.4. Հաշվի առնելով, որ ներքոհիշյալ Մասնակիցների կողմից հայտով ներկայացվել են չհիմնավորված ցածր գնային առաջարկներ, ուստի ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետը՝ պետք է ներկայացվեն լրացուցիչ հիմնավորումներ: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումներ չներկայացնելու կամ ներկայացրած հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը կմերժի 1-ին տեղը զբաղեցրած Մասնակիցների հայտերն այդ չափաբաժինների մասերով և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացնի հաջորդ տեղը զբաղեցրած Մասնակցին: